.

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2014

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա Մակարդակ

1 Նկարում ո՞ր տառով է պատկերված արլ. ե. 135° միջօրեականը.

1) Ե
2) Է
3) Ը
4) Զ



2 Եթե քարտեզի անվանական մասշտաբը 1 սմ–ում 50 կմ է, ապա դրա թվային մասշտաբը կլինի.

1) 1 : 50 000 000
2) 1 : 50 000
3) 1 : 500 000
4) 1 : 5 000 000

3 Նկարում Դ կետի ազիմուտը հավասար է.

1) 315°
2) 225°
3) 135°
4) 45°



4 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Մարտի 21–ին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց են ընկնում հասարակածի վրա:
2) Հունիսի 22–ի կեսօրին Արեգակը լինում է զենիթում հվ. լ. 23° 30′ զուգահեռականի վրա:
3) Դեկտեմբերի 22–ի կեսօրին Արեգակը լինում է զենիթում հս. լ. 23° 30′ զուգահեռականի վրա:
4) Սեպտեմբերի 23–ին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց են ընկնում հյուսիսային բևեռային շրջագծի վրա:

5 **Երկրի խորքում բարձր ջերմաստիճանից ապարները վերածվում են գազերով ու ջրային գոլորշիներով հագեցած հրահեղուկ զանգվածի, որը կոչվում է.**

1) խառնարան
2) մագմա
3) լավա
4) մղանցք

6 **Օվկիանոսների հատակում տեղի ունեցող երկրաշարժերից առաջանում են կործանիչ ալիքներ, որոնք կոչվում են.**

1) մակընթացություն
2) տեղատվություն
3) ցունամի
4) ցիկլոն

7 **Բնութագրումով որոշել տեղումների տեսակը.**
Այն առաջանում է Երկրի մակերևույթին՝ ջրային գոլորշիների շփումից: Գոյանում է տարվա տաք եղանակներին, պարզկա (անամպ) գիշերներին, անհողմ օրերին: Տեղումների ո՞ր տեսակն է.

1) կարկուտը
2) ցողը
3) եղյամը
4) անձրևը

8 Երևան քաղաքում տարվա ընթացքում ըստ ամիսների ստացվել են միջին ամսական հետևյալ ջերմաստիճանները. – 4,5°, – 1,3°, + 5,4°, + 11,8°, + 17°, + 21,1°, + 25,1°, + 24,9°, + 20,1°, + 13,5°, + 6,2°, – 0,9°:
Ջերմաստիճանի տատանման տարեկան լայնույթը կկազմի.

1) 31,2°
2) 19,1°
3) 12,8°
4) 29,6°

9 Նկարում Դ տառով նշված է.



1) միջնապատյանը
2) նստվածքային շերտը
3) բազալտային շերտը
4) գրանիտային շերտը

10 Նկարում ո՞ր թվով է նշված ամենացածր մթնոլորտային ճնշումը.



1) 4
2) 1
3) 2
4) 3

11 «Ծովածոց — օվկիանոս» զույգերից ընտրել ճիշտը.

1) Մեքսիկական — Ատլանտյան
2) Կալիֆոռնիական — Հնդկական
3) Մեծ ավստրալական — Հյուսիսային սառուցյալ
4) Պարսից — Խաղաղ

12 **Տափաստանների զոնան բնորոշվում է.**

1) սեզոնային կլիմայով, ամռանը թափանցող հասարակածային, իսկ ձմռանը՝ արևադարձային օդային զանգվածներով, բուսականության մեջ բարձրացողուն (2–3 մ) հացազգիների և ծառերի գերակշռությամբ
2) տարեկան ցածր ջերմաստիճաններով, քիչ տեղումներով, որոնք հիմնականում թափվում են ձյան տեսքով, ցածրահասակ բուսականությամբ
3) ցամաքային կլիմայով՝ տաք ու խոնավ ամառով, ցուրտ ձմեռով, հումուսով հարուստ (մինչև 8–12 %) սևահողերով
4) խիստ չոր ցամաքային կլիմայով, օրական և տարեկան ջերմաստիճանների մեծ տատանումներով, շատ աղքատ բուսականությամբ՝ չորադիմացկուն տեսակներով

13 **Բնութագրումով որոշել գետը.**
Եվրասիայի ամենաերկար ու ամենաջրառատ գետն է, ունի ամառային հորդացում: Ո՞ր գետն է.

1) Յանցզի
2) Ամուր
3) Հուանհե
4) Գանգես

14 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Աշխարհագրական լայնությունը Երկրի մակերևույթի որևէ կետի հեռավորությունն է հասարակածից՝ արտահայտված աստիճաններով:
2) Խոշոր մասշտաբի քարտեզների խմբի մեջ մտնում են 1 : 10 000 000–ից ավելի փոքր մասշտաբի քարտեզները:
3) Սկզբնական միջօրեականը Երկիրը բաժանում է հյուսիսային և հարավային կիսագնդերի:
4) Բոլոր զուգահեռականներն ունեն հավասար երկարություն:

15 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Արեգակից ստացվող ջերմությունը Երկրի վրա բաշխված է հավասարաչափ:
2) Արևադարձային լայնություններում հաստատվում է ցածր ճնշում:
3) Որքան փոքր է Արեգակի ճառագայթների անկման անկյունը, այնքան Երկրի մակերևույթը քիչ ջերմություն է ստանում:
4) Մթնոլորտային բարձր ճնշման գոտիներում առատ տեղումներ են թափվում:

16 **«Գետ— ջրվեժ» զույգերից ընտրել սխալը.**

1) Չուրուն — Անխել
2) Կոնգո — Լիվինգստոնի
3) Ամազոն — Իգուասու
4) Զամբեզի— Վիկտորիա

17 **«Մայրցամաք — թերակղզի» զույգերից ընտրել *սխալը.***

1) Ավստրալիա — Քեյփ Յորք
2) Աֆրիկա — Սոմալի
3) Եվրասիա — Ալյասկա
4) Հյուսիսային Ամերիկա — Ֆլորիդա

18 **Կալիֆոռնիա թերակղզու կլիման.**

1) արևադարձային անապատային է
2) խոնավ արևադարձային է
3) բարեխառն ցամաքային է
4) բարեխառն ծովային է

19 **Քարտեզում Դ տառով ո՞ր գետն է նշված.**

1) Ինդոս
2) Գանգես
3) Եփրատ
4) Տիգրիս



20 **Քարտեզում Զ տառով ո՞ր պետությունն է նշված.**

1) Իրան
2) Ուզբեկստան
3) Աֆղանստան
4) Պակիստան

21 **«Ժողովրդագրական պայթյունը».**

1) բնակչության թվի կայունացումն է պարզ վերարտադրության պայմաններում
2) բնակչության թվի կտրուկ աճն է մահացության կրճատման հետևանքով
3) բնակչության թվի կայուն աճն է ընդլայնված վերարտադրության պայմաններում
4) բնակչության թվի կտրուկ նվազումն է ծնելիության կրճատման հետևանքով

22 **Բնակության վայրի ժամանակավոր կամ մշտական փոփոխության հետ կապված բնակչության տեղաշարժը կոչվում է.**

1) բնակչության բնական շարժ
2) տարաբնակեցում
3) բնակչության միգրացիա
4) բնակչության տեղաբաշխում

23 **Բնութագրումով որոշել պետությունը.**
Այս պետությունը մեծ հետք է թողել մարդկային քաղաքակրթության մեջ և բացառիկ դեր ունի արաբական աշխարհում: Տիպիկ անապատային երկիր է: Այստեղ է երկրագնդի ցամաքի ամենացածր վայրերից մեկը: Մայրաքաղաքն արաբական աշխարհի խոշորագույն քաղաքն է: Պետությանը մեծ եկամուտ ապահովող բնագավառ է միջազգային զբոսաշրջությունը: Ո՞ր պետությունն է.

1) Լիբիան
2) Սիրիան
3) Եգիպտոսը
4) Սաուդյան Արաբիան

24 **Երկրի բնակչության թիվը 4 մլն է, բնական աճը՝ 20 ‰: Բնակչության բացարձակ բնական աճը կկազմի.**

1) 100 000 մարդ
2) 20 000 մարդ
3) 40 000 մարդ
4) 80 000 մարդ

25 **Ընտրել «լեզվախումբ — ժողովուրդ» համապատասխանության ճիշտ շարքը.**

1. ռոմանական	ա. անգլիացիներ
2. սլավոնական	բ. ֆրանսիացիներ
3. գերմանական	գ. քրդեր
4. իրանական	դ. ուկրաինացիներ

1) 1–բ, 2–դ, 3–գ, 4–ա
2) 1–ա, 2–բ, 3–գ, 4–դ
3) 1–բ, 2–դ, 3–ա, 4–գ
4) 1–գ, 2–ա, 3–բ, 4–դ

26 **Դեպի Կարմիր ծով անմիջական ելք *չունի.***

1) Սաուդյան Արաբիան
2) Եգիպտոսը
3) Եմենը
4) Օմանը

27 **«Արտադրանք — արդյունաբերության ճյուղ» զույգերից ընտրել ճիշտը.**

1) սինթետիկ մանրաթել — թեթև արդյունաբերություն
2) հաստոց — մետաղաձուլություն
3) պլաստմասսա — մեքենաշինություն
4) տրիկոտաժ — թեթև արդյունաբերություն

28 **Թուրքիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ.***

1) Թեթև արդյունաբերությունը երկրի արդյունաբերության ավանդական զարգացած ճյուղերից է:
2) Իսքենդերունը սև մետաղաձուլության խոշորագույն կենտրոնն է:
3) Երկրի քիմիական արդյունաբերությունն արտադրում է դեղագործական ապրանքների համաշխարհային արտադրանքի գերակշիռ մասը:
4) Էլեկտրաէներգիայի գերակշիռ մասն արտադրվում է ջեկերում:

29 **«Կեղծ ուրբանիզացումն» առավել բնորոշ է.**

1) Արգենտինային և Բրազիլիային
2) ԱՄՆ–ին և Կանադային
3) Ֆրանսիային և Շվեյցարիային
4) Ավստրալիային և Մեծ Բրիտանիային

30 **Դեպի ծով ելք չունեն.**

1) Ռումինիան և Ուկրաինան
2) Ավստրիան և Չեխիան
3) Ալժիրը և Պերուն
4) Բելգիան և Բուլղարիան

31 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Քիմիական արդյունաբերության գիտատար ճյուղերը տեղաբաշխված են զարգացող երկրներում:
2) Նավթի համաշխարհային պաշարների մոտ 9/10–ը կենտրոնացված է զարգացած երկրներում:
3) Էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում ամենամեծ բաժինն ունեն ատոմային էլեկտրակայանները:
4) Էլեկտրաէներգիայի համաշխարհային արտադրության 4/5–ը բաժին է ընկնում զարգացած երկրներին:

32 **Էներգետիկական հաշվեկշռում ջրէկների առավել մեծ բաժին ունեցող երկրներ են.**

1) Գերմանիան և Ճապոնիան
2) Ուկրաինան և ԱՄՆ–ը
3) Նորվեգիան և Կանադան
4) Չինաստանը և Ֆրանսիան

33 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Բարգուշատի և Մեղրու լեռնաշղթաները մասնատված են Արփայի և Արաքսի գետահովիտներով:
2) Փամբակի և Ծաղկունյաց լեռները արտաքին շարի լեռներ են:
3) Գեղամա լեռնավահանը ճառագայթաձև մասնատվել է Գեղարոտի, Ամբերդի խոր հովիտներով:
4) Եղնախաղի լեռնավահանը ձգվում է Հայաստանի և Թուրքիայի պետական սահմանի ուղղությամբ:

34 **ՀՀ քիմիական արդյունաբերության զարգացմանն առավելապես նպաստել է.**

1) հանքային քիմիական հումքի խոշոր պաշարների առկայությունը
2) Ատոմային էլեկտրակայանի կառուցումը
3) արդյունաբերության բնապահպանական ուղղվածությունը
4) սև մետաղաձուլության թափոնների առկայությունը

35 **Լոռու մարզում բուսաբուծության ո՞ր ենթաճյուղը զարգացած չէ.**

1) կարտոֆիլի մշակությունը
2) այգեգործությունը
3) ծխախոտի մշակությունը
4) հացահատիկի մշակությունը

36 **Ո՞ր լեռնագագաթն է քարտեզում նշված Դ տառով.**

1) Մեծ Եղնախաղ
2) Լալվար
3) Եզնասար
4) Աչքասար



37 **Ո՞ր քաղաքն է քարտեզում նշված Ը տառով.**

1) Արտաշատ
2) Մասիս
3) Վեդի
4) Արարատ

38 **Ածխի պաշարներով հարուստ երկրներ են.**

1) Ճապոնիան և Մոնղոլիան
2) Իրանը և Թուրքիան
3) Ֆրանսիան և Իսպանիան
4) Ռուսաստանը և Ուկրաինան

39 **Ջրավազաններն աղտոտող արհեստական նյութերից են.**

1) քիմիական պարարտանյութերը
2) հարթավայրային գետերով տեղափոխվող փայտանյութերը
3) ջրէկներում էներգետիկ նպատակներով օգտագործված ջրերը
4) ապարների քիմիական հողմահարման հետևանքով առաջացած նյութերը

40 **Բնության այն տարրերն ու երևույթները, որոնք անմիջապես չեն օգտագործվում և սպառվում արտադրության գործընթացի ընթացքում, բայց կարող են ազդեցություն ունենալ դրա վրա, կոչվում են.**

1) աշխատանքի միջոցներ
2) բնական ռեսուրսներ
3) արտադրողական ուժեր
4) բնական պայմաններ

41 **Գրել այն կղզիների և կղզեխմբերի համարները, որոնք Ատլանտյան օվկիանոսում և նրա ծովերում են.**

1) Կուրիլյան
2) Մոզամբիկ
3) Իսլանդիա
4) Նյուֆաունդլենդ
5) Շրի Լանկա
6) Ֆոլկլենդյան
7) Սարդինիա
8) Ալեության

42 **Գրել այն լեզուների համարները, որոնք չեն մտնում սլավոնական լեզվախմբի մեջ.**

1) բուլղարերեն
2) լեհերեն
3) սերբերեն
4) շվեդերեն
5) էստոներեն
6) չեխերեն
7) սլովակերեն
8) ռուսերեն

43 **Գրել Կուրի ավազանին պատկանող վտակների համարները.**

1) Դեբեդ
2) Գետիկ
3) Որոտան
4) Մարմարիկ
5) Արփա
6) Հրազդան
7) Խաչենագետ
8) Փամբակ

44 **Տրված պետությունները դասավորել պողպատի արտադրության աճման կարգով.**

1) ԱՄՆ
2) Չինաստան
3) Գերմանիա
4) Ճապոնիա

45 **Եվրասիայի ներքին ջրերի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Մեռյալ լճի ջրերն այնքան քաղցրահամ են, որ լճում բացակայում է կենդանական աշխարհը:
2) Եվրասիայի գետերը պատկանում են երեք օվկիանոսների ավազաններին և կենտրոնաասիական ներքին անհոսք ավազանին:
3) Խաղաղ օվկիանոսի ավազանին են պատկանում մայրցամաքի ամենաջրառատ գետերը:
4) Յանցզին, Հուանհեն, Մեկոնգը և Ամուրը հորդանում են ձմռանը:
5) Կենտրոնաասիական փակ, ներքին անհոսք ավազանին են պատկանում Վոլգա, Կուր և Արաքս գետերը:
6) Տեկտոնահրաբխային ծագման լճերից հայտնի են Վեներնը և Վետերնը:

Բ Մակարդակ

46 **Հաշվել երկու կետերի իրական հեռավորությունը, եթե նրանք միևնույն միջօրեականի վրա են և միմյանցից հեռացված են 8°.**

1) 880 կմ
2) 858 կմ
3) 808 կմ
4) 888 կմ

47 **Ի՞նչ բարձրության վրա օդի ջերմաստիճանը հավասար կլինի + 11°–ի, եթե նույն պահին Արագածի գագաթին – 4°է (յուրաքանչյուր 1000 մ–ին ջերմաստիճանի Փոփոխությունն ընդունել 5°).**

1) 1000 մ
2) 1090 մ
3) 1900 մ
4) 1009 մ

48 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Օվկիանոսի հատակին տեղի ունեցող երկրաշարժից առաջացած ալիքը կոչ-վում է ցունամի:
2) Օվկիանոսի հատակի մինչև 200 մ խորության հատվածը կոչվում է մայրցամաքային լանջ:
3) Մերձբևեռային շրջաններում օվկիանոսի ջուրը սառչում է 0°–ում:
4) Օվկիանոսի այն հատվածը, որը ներթափանցել է ցամաքի մեջ, կոչվում է նեղուց:

49 **Ի՞նչը բնորոշ չէ բարեխառն օդային զանգվածներին**.

1) առանձնանում են բարձր ջերմությամբ, չորությամբ և փոքր թափանցիկությամբ (մեծ փոշոտվածության պատճառով)
2) ձևավորվում են 40°–70°լայնությունների միջև
3) արկտիկական և արևադարձային օդի միախառնման արդյունք են
4) ծովային և ցամաքային տարատեսակները խիստ տարբեր են. ծովայինը բնորոշվում է մեծ խոնավությամբ, իսկ ցամաքայինը՝ չորությամբ

50 **Ո՞ր շարքի բոլոր աշխարհագրական օբյեկտներն են Հարավային Ամերիկայում.**

1) Օրինոկոյի դաշտավայր, Ռուիս հրաբուխ, Պոոպո լիճ
2) Պադանի դաշտավայր, Վինսոն լեռ, Իսիկ Կուլ լիճ
3) Լա Պլատայի դաշտավայր, Օրիսաբա հրաբուխ, Էրի լիճ
4) Լավրենտյան սարահարթ, Կոտոպախի հրաբուխ, Մեծ արջի լիճ

51 **Բացարձակ միապետություններ են.**

1) Նիդերլանդները և Բելգիան
2) Ճապոնիան և Մեծ Բրիտանիան
3) Նորվեգիան և Շվեդիան
4) Օմանը և Բրունեյը

52 **Բնակչության վերարտադրության առաջին տիպի երկրներ չեն.**

1) Կանադան և Ավստրալիան
2) Ֆրանսիան և Իտալիան
3) Ռուսաստանը և Բելառուսը
4) Նիգերը և Սուդանը

53 **Բրնձի համախառն բերքով առաջատար երկրներն են.**

1) Չինաստանը և Հնդկաստանը
2) ԱՄՆ–ը և Ռուսաստանը
3) Ավստրալիան և Բրազիլիան
4) Կանադան և Մեքսիկան

54 **Ֆրանսիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Ֆրանսիային են պատկանում Սարդինիա և Կորսիկա կղզիները:
2) Էլեկտրաէներգիայի մեծ մասն արտադրվում է ջերմային էլեկտրակայաններում:
3) Մեծ Բրիտանիայից բաժանվում է Ջիբրալթարի նեղուցով:
4) Ըստ պետական կարգի՝ նախագահական հանրապետություն է:

55 **Բնութագրումով որոշել երկիրը.**

Այս երկիրն իր տարածքով և բնակչության թվով դասվում է աշխարհի գերխոշոր երկրների շարքին: Արևելքում ափերը ողողվում են Ատլանտյան օվկիանոսի ջրերով: Այն հարուստ է գրեթե բոլոր տեսակի օգտակար հանածոներով: Սակայն անբավարար են վառելիքաէներգետիկ ռեսուրսները: Ո՞րն է այդ երկիրը.

1) Արգենտինան
2) ԱՄՆ–ը
3) Մեքսիկան
4) Բրազիլիան

56 **Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Լեռնաշխարհից արևմուտք տարածվում է Իրանական բարձրավանդակը:
2) Զբաղեցնում է մոտ 200 հազ. կմ² մակերես:
3) Խաղաղօվկիանոսյան գեոսինկլինալային գոտու կենտրոնական մասում է:
4) Սև ծովի ափին զուգահեռ տարածվում են Արևելապոնտական լեռները:

57 **ՀՀ կլիմայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Տարվա ընթացքում ամենաշատ ամպամած օրերը լինում են Գեղարքունիքի մարզում (Մարտունի):
2) Հանրապետության տարածքը արևադարձային կլիմայական գոտում է:
3) Տարվա տաք կեսին տիրապետում են Իրանական բարձրավանդակից թափանցող արևադարձային օդային զանգվածները:
4) Տարվա ընթացքում առավելագույն տեղումները լինում են նոյեմբեր–դեկտեմբեր ամիսներին:

58 **Տավուշի մարզում արդյունաբերության ո՞ր ենթաճյուղին պատկանող ձեռնարկություններ *չկան.***

1) գորգագործության
2) պղնձաձուլության
3) գինեգործության
4) սարքաշինության

59 **Արմավիրի և Արարատի մարզերի համար ի՞նչը ընդհանուր չէ.**

1) Գյուղատնտեսության զարգացման գլխավոր պայմանը ոռոգումն է:
2) Բացառապես հարթավայրային մակերևույթ ունեցող մարզեր են:
3) Հանրապետությունում ամենազարգացած գյուղատնտեսությունն ունեցող մարզերն են:
4) Բուսաբուծության առաջատար ճյուղերը խաղողագործությունը, պտղաբուծությունը և բանջարաբուծությունն են:

60 **Ո՞ր շարքում տրված մարզերի համար է գունավոր մետալուրգիան մասնագիտացման ճյուղ.**

1) Արմավիրի և Վայոց ձորի
2) Գեղարքունիքի և Շիրակի
3) Լոռու և Սյունիքի
4) Արագածոտնի և Շիրակի

61 **Տրված են Հայկական լեռնաշխարհի երեք խոշոր լճերը: Դասավորել դրանց համարները լճերի մակերեսների աճման կարգով.**

1) Վանա
2) Սևանա
3) Ուրմիա

62 **Գրել այն ջրէկների համարները, որոնք չեն մտնում Հրազդանի կասկադի մեջ.**

1) Շամբի
2) Քանաքեռի
3) Տաթևի
4) Արգելի
5) Երևանի
6) Այրումի
7) Սևանի
8) Արզնիի

63 **Գրել այն պետությունների համարները, որոնք սահմանակցում են Ֆրանսիային.**

1) Բելգիա
2) Պորտուգալիա
3) Դանիա
4) Նիդերլանդներ
5) Ավստրիա
6) Սան Մարինո
7) Լյուքսեմբուրգ
8) Լիխտենշտայն

64 **Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են բամբակի արտադրությամբ.**

1) Գերմանիա
2) Կանադա
3) Ռուսաստան
4) Իրան
5) Վրաստան
6) Չինաստան
7) Պակիստան
8) Ֆրանսիա

65 **Օդի բացարձակ խոնավությունը 15 գ/մ^3 է: Օդը հագեցնելու համար անհրաժեշտ է 20 գ ջրային գոլորշի: Որոշել օդի հարաբերական խոնավությունը:**

(66-67) Գետի լայնությունը 10 մ է, միջին խորությունը՝ 0,6 մ, ջրի արագությունը՝ 3,5 մ/վ.

66 Որոշել գետի հոսքը մեկ ժամում:

67 Որոշել գետի ծախսը:

(68-69) Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 680 մմ է, իսկ գագաթին՝ 330 մմ:

68	Որոշել լեռան բացարձակ բարձրությունը:

69	Որոշել լեռան հարաբերական բարձրությունը:

70 **ՀՀ արդյունաբերության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններ են Հրազդան և Գյումրի քաղաքները:
2) Ալյումինի արդյունաբերությունը բացառապես օգտագործում է տեղական հումք՝ Թեժ լեռան և Շվանիձորի (Մեղրու լեռնաշղթա):
3) ՀՀ մեքենաշինության տեղաբաշխումը ամբողջությամբ համընկնում է գունավոր մետաղաձուլության տեղաբաշխման հետ:
4) ՀՀ էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում Հայկական ատոմակայանի բաժինը կազմում է ավելի քան 2/5–ը:
5) Մեքենաշինության զարգացումը պայմանավորված է սև մետաղների առկայությամբ:
6) Վառելիքային հաշվեկշռում ամենամեծ բաժինն ունի բնական գազը: